ԱՆՑՈՐԳԸ ԵՒ ԻՐ ՃԱՄԲԱՆ

(ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՅՈՒՇԱՏԵՏՐԻՑ)

Գրեց՝ ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆ

ԱՐԵՒԵԼՔ ԵՒ ԱՐԵՒՄՈՒՏՔ

Մեր ազգային կեանքը բաղեղի նման փաթաթուել է քաղաքական մի քանի դաղափարների շուրջը եւ կանգ առել:

Ներքին, մտաւորական տեսակէտից, ամէն ինչ անորոշ է, անկայուն, դեղեւուն: Ճանապարհը չեղած մեր սայլը կախուել է անդնդի վրայ: Անիւը պտտում է պարապի մէջ:

Եթէ ոտք կոխէք ներկայի վրայ՝ դետինը կը շարժի, իսկ ապագան դէմքը խաւարին է կպցրել: Հայ դիտակցութիւնը հեղեղների տակ ծեծուած՝ հաղիւ կարողացել է մի քանի տարրական եւ մակերեսային ճշմարտութիւնների մօտենալ եւ դաշտից վերադարձող տաւարի նման հայրենական տան դուռը եղջիւրներով զարնել:

Մեր ստեղծագործական ոգին, գիշերը գիւղը անցնող պանտուխտի պէս, մութի դէմ եւ շունների դէմ մահակ է շարժել: Մի միտք ենք ունեցել՝ անցնե՛լ, այս անդամ էլ անցնել ու տեսնել թէ ինչ կը լինի...

Ու ժողովուրդի ենթագիտակցութեան մէջ հոգեկան դանձերը պառկել են շերտերի տակ, խամրել, քարացել, փոշիացել:

Գրեթէ յամբ եւ խուլ մեր լեռների դադաթներից հորիզոնը խուսափել է, եւ լայն աշխարհի մշակութային հոսանքները, դաղափարական քարտէսի վրայ տեղի ունեցող ցնցումները ներս են խուժել դէպի մեր հովիտները, մեղանից անկախ, տարերային ուժով:

Մեզ ամէն ինչ պարտադրել են: Մենք երբեք չենք յենուել մեր առաքինութիւններից բխած արժէքների վրայ, ստեղծելու համար ուրիշները: Վազել ենք հարաւ, վազել ենք հիւսիս աղօտ փարոսների մեռնող լոյսի ետեւից ու մնացել ենք մինակ՝ փխրուն ապակիէ պատրանքը մեր ձեռքին:

Աթէնքի հոյակապ մշակոյթը մեր լեռների մօտից սահում է գրեթէ աննշմարելի կերպով: Մեր թարգմանիչները հասնում են նրա աղեքսանդրեան շրջանի հոգեվարքին:

Արաբական միտքը՝ հզօր եւ համաչխարհային՝ ոչ մի կարգու չի հիմնում մեզ մօտ: Մրրիկի նման անցնող ձիաւորները մի քանի կայծկլտուն ածականներ են նետում, որոնք ապրում են մինչեւ այսօր Նարեկացու աղօթքների մէջ, եւ անհետանում են:

Շինում ենք Բիւզանդիոնը՝ մեզ ուրանալով:

Մօտենում ենք պապական Հռոմին, երբ նա մեռնելու վրայ է եւ Կիլիկիան զոհ է դնում:

Ու այսօր, մեր իմաստակները, ծծկան երախաների նման ոտքերը վեր տնկած, պարպում են մարքսիզմի ջրախառն կաթը, Մոսկուայի օրօրոցի մէջ պառկած, եւ լուծում բոլոր խնդիրները:

Արդեօք նորից մեռնող աշխարհի փէչը չէ՞ մեր ձեռքին:

Անիւը պտտում է պարապի մէջ:

* * *

Եւ սակայն, եթէ մեր շուրջը նայենք, երբեք մարդկութիւնը մտաւոր եւ բարոյական այնքան ահաւոր տագնապի չի ենթարկուած, ինչպէս այսօր:

Երերող Եւրոպան հսկայ ճիգ է անում նոր մի կեանքի կարելի հիմքերը գտնելու համար, եւ թռում է ի զուր տեղը, իսկ Ասիան շարունակում է այրուել, պատրաստուում է նոր պայքարների:

Ծերացած աշխարհի դարաւոր յօրինուածքը ճարճատում է. ամէն ինչ տեղի է տալիս. ամենահին պատերը եւ հաշուած լաստակները ճեղքուում եւ բաժանուում են, սարսափած նայուածքների առջեւ:

Երբեք մարդկութիւնը — խորհող եւ դի-

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան